ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՊՐՈՖՏԵՍՏ ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-2022/16-4-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Xience xpedition 48	Abbott Vascular	Ստենտի նյութը՝ կոբալտի-քրոմի համաձուլվածք, ստենտի ծածկը՝ Էվերոլիմուս արտազատող ծածկ: Ստենտի կառուցվածքը լազերով կտրված կոբալտ-քրոմային գլան: 2.5-3.0 մմ տրամագծով ստենտն ունի երեք կարճ և երեք երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: 3.5 մմ-ոց ստենտն ունի երեք կարճ և վեց երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: Ստենտի եզրային օղը ձևավորված է սիմետրիկ ամրակներով՝ բարելավելու ուղղորդիչ կաթետերի դուրսբերումը: Ստենտի պատերի հաստությունը՝ 0.0032”: Ստենտի երկայնաձիգ ճկունությունը՝ գերազանց: Ստենտը ոչ ֆեռոմագնիսական է և ունի բարձր ճառագայթային ուժ: Մետաղական մակերեսի ընդարձակում - 13.3%-ի սահմաններում 3.0 մմ տրամագծի դեպքում: Անկախ լայնացման աստիճանից չի գերազանցում ստենտի երկարության 5%-ը: Բալոնի ճնշման ցուցանիշները՝ 8 մթն 2.5- 2.75 մմ տրամագծի ստենտերի համար, 10 մթն 3.0-3.5 մմ տրամագծի ստենտերի համար: Ստենտի բացման նոմինալ ճնշումը՝ 11 atm, պայթման առավելագույն ճնշումը՝ 18 atm (բոլոր տրամագծի ստենտերի համար):

			Բալոնի նյութը՝ բազմաշերտ պեբաքս։ Ուղղորդիչ կաթետերի ներքին նվազագույն տրամագիծը մինչև 0.056 դյույմ կամ 1.4 մմ (բոլոր չափսի ստենտերի համար)։ Ստենտի դեղորայքային ծածկը բաղկացած է ակրիլային և ֆլուորո պոլիմերներից, որոնք օգտագործվում են անոթային կարի համար նախատեսված թելերի արտադրությունում։ Դեղանյութի կոնցենտրացիան ստենտի մակերեսին՝ 100 մկգ/սմ2։ Կախված վիրահատվող անոթի տրամագծից ստենտի պահաջվող չափերն են ըստ տրամագծերի՝ 2.5, 2.75, 3.0, 3.5 մմ։ Ստենտի երկարությունը՝ 48 մմ։ Ֆորմատ՝ հատ։ Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար CE MARK որակի վկայականի առկայություն։ Նոր է, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ։ Ներառում է տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով։ Հանձնելու պահին կունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ը։ Պատվիրատուն իրավունք ունի ըստ անհրաժեշտության վերադարձնել կամ փոխել ապրանքի չափսը այլ չափսով, եթե առկա է ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 50%-ը։ Մասնակիցը պայմանագրի կատարման փուլում ներկայացնում է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ПРОФТЕСТ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-2022/16-4-ԵՊԲՀ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	товарный знак	наименование производителя	технические характеристики
1			